Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
_____-ի N _____ -Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՆՈՐՀՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանի շնորհման հետ առնչվող հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետությունում շնորհվում է դոկտորի գիտական աստիճան՝ ըստ բարձրագույն կրթության մասնագիտությունների:

3. Դոկտորի գիտական աստիճանը վկայում է անձի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքի, կարողունակությունների և հմտությունների համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակի 8-րդ մակարդակի ընդհանրական բնութագրիչներին:

4. Դոկտորի գիտական աստիճանի կարող են հավակնել այն անձինք, որոնք ունեն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում, սովորել են երրորդ մակարդակի կրթական ծրագրով և կուտակել են անհրաժեշտ կրեդիտներ և հանձնել են քննություն՝ ըստ բարձրագույն կրթության մասնագիտությունների:

5. Դոկտորի գիտական աստիճան շնորհում է մասնագիտական խորհուրդը՝ հիմք ընդունելով դոկտորական ատենախոսության պաշտպանությունը, որի ժամանակ հավաստվում է՝

1) մասնագիտական առաջընթացի մակարդակը՝ ինքնուրույն և ինքնատիպ (օրիգինալ) հետազոտության միջոցով,

2) հետազոտության և արդյունքների համապատասխանությունը հետազոտությունների իրականացման ժամանակակից առաջատար չափանիշներին:

6. Գիտական աստիճան շնորհելու վերաբերյալ մասնագիտական խորհրդի որոշումը հաստատում և դիպլոմով ամրագրում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության

կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե):

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

7. Դոկտորական ատենախոսությունը հանդիսանում է դոկտորանտի կողմից, գիտական ղեկավարի մասնագիտական ուղղորդմամբ և հսկողությամբ, տվյալ բնագավառի գիտական մեթոդների հիման վրա իրականացված ինքնուրույն գիտական աշխատություն, որը պետք է վկայի դոկտորանտի կարողությունը՝ տվյալ ոլորտում ստեղծելու նոր գիտելիք, զարգացնելու առկա տեսությունները և առաջարկելու նոր գիտական լուծումներ:

8. Ատենախոսությունը պետք է լինի համակարգված, գիտականորեն հիմնավորված և կազմված այնպիսի ձևաչափով, որը հնարավորություն կտա գնահատելու դոկտորանտի հետազոտական հմտությունները, գիտական մտածողությունը և ոլորտային ներդրումը:

9. Ատենախոսությունը սովորաբար ներառում է հետևյալ հիմնական կառուցվածքային բաժինները՝

1) ներածություն, որը որպես կանոն ներառում է հետազոտական թեմայի արդիականության և նշանակության հիմնավորումը, հետազոտական խնդրի ձևակերպումը և նպատակի սահմանումը, հիմնական հարցադրումների կամ հիպոթեզի ներկայացումը, հետազոտության կառուցվածքի և տրամաբանության համառոտ նկարագիրը,

2) գրականության վերլուծություն, որը որպես կանոն ներառում է հետազոտության թեմային վերաբերող բնագավառում առկա տեսությունների, մեթոդների և արդյունքների քննություն, գիտական աղբյուրների համակողմանի վերլուծություն, գիտական բացերի և չլուծված հարցերի վերհանում, դոկտորանտի կողմից ընտրված հետազոտական թեմայի հիմնավորում,

3) մեթոդաբանություն, որը որպես կանոն ներառում է հետազոտության տեսական և գործնական մոտեցումների նկարագրությունը, օգտագործված մեթոդների, գործիքների և տվյալների աղբյուրների հիմնավորումը, հետազոտության իրականացման ընթացքի և էթիկական չափանիշների ներկայացումը, ընտրված մեթոդաբանության հիմնավորումը՝ հիմնվելով գիտական փաստարկման վրա,

4) հետազոտական մաս, որը ներառում է իրականացված հետազոտության ընթացքի ներկայացումը, ստացված արդյունքների վերլուծությունը, համադրությունը և մեկնաբանությունը, արդյունքների համադրությունը ձևակերպված հիպոթեզներին կամ

նպատակներին, հնարավոր սահմանափակումների և հետագա ուսումնասիրության ուղղությունների քննարկումը,

5) եզրակացություններ և առաջարկություններ, որտեղ ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները, հստակ ձևակերպվում է նոր գիտելիքի ստեղծման կամ ընդլայնման փաստը, նկարագրվում է հնարավոր տեսական կամ գործնական նշանակությունը, ներկայացվում են հետագա հետազոտությունների կամ կիրառական քայլերի առաջարկներ,

6) գրականության ցանկ, որտեղ բերվում են բոլոր օգտագործված գիտական աղբյուրները՝ ներկայացված ամբողջական և միանշանակ ձևաչափով,

7) հավելվածներ, ըստ անհրաժեշտության, որտեղ բերվում են լրացուցիչ տվյալներ, հարցաթերթիկներ, աղյուսակներ, փորձարկման արդյունքներ, կամ այլ օժանդակ նյութեր:

10. Դոկտորական ատենախոսության մեջ Հայցողը պարտավոր է հղում կատարել այն հեղինակներին և աղբյուրներին, որոնցից նա փոխառել է առանձին դրույթներ կամ նյութեր:

11. Ատենախոսությունը պետք է հանդիսանա ինքնուրույն գիտական աշխատանք, որը ինքնատիպ և նոր ներդրում է գիտության տվյալ ոլորտում, այն պետք է ապահովի մեթոդաբանական հստակություն և գիտական ճշգրտություն, պետք է համապատասխանի էթիկական չափանիշներին, ներառյալ՝ տվյալների մշակման, հեղինակային իրավունքի և աղբյուրների պատշաճ հղման կանոններին:

12. Ատենախոսությունը պետք է ցուցադրի դոկտորանտի կարողությունը՝

1) վերլուծելու բարդ գիտական խնդիրներ,

2) ստեղծելու նոր գիտելիք կամ կիրառական լուծումներ,

3) արդյունավետ հաղորդակցվելու գիտական հանրության հետ գրավոր և բանավոր ձևով:

13. Դոկտորական ատենախոսությունը պետք է հանդիսանա գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական կամ տեխնոլոգիական մշակում:

14. Հետազոտական աշխատանքի իրականացման ամբողջ ընթացքում բուհի սահմանած կարգով և պարբերականությամբ, բայց ոչ պակաս քան տարեկան պարբերականությամբ դոկտորանտը և գիտական ղեկավարը զեկուցում են գիտական առաջընթացի մասին՝ թեման հաստատած ակադեմիական խորհրդի նիստի ժամանակ,

որի արդյունքներով ձևավորված եզրակացությունները կցվում են դոկտորանտի անհատական գործին, որը վարվում է Կոմիտեի թվային տիրույթում:

15. Ատենախոսությունը հանդիսանում է դոկտորանտի մտավոր սեփականությունը և գիտական աստիճանի դիպլոմը հանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում այն արխիվացվում է բուհի և Կոմիտեի թվային տիրույթում, ինչպես նաև Հայաստանի ազգային արխիվում և Հայաստանի ազգային գրադարանում: Դոկտորանտի գրավոր համաձայնությամբ ատենախոսությունը կարող է տեղադրվել համապատասխան թվային տիրույթներում բաց հասանելիությամբ:

16. Ատենախոսությունը պետք է ունենա համառոտ շարադրանք՝ սեղմագիր, որն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների գիտական նորույթը, կիրառական նշանակությունը:

17. Մասնագիտական խորհրդի առաջարկությամբ սեղմագիրը հրատարակվում է Կոմիտեի կողմից ատենախոսության պաշտպանությունը կազմակերպելու համար ներկայացված փաստաթղթերի փաթեթի ստուգման արդյունքում պաշտպանության նշանակված օրվանից առնվազն 25 օր առաջ՝ մինչև մեկ տպագրական մամուլ ծավալով, իսկ հասարակական և հումանիտար գիտությունների դեպքում ատենախոսության սեղմագիրը կարող է գերազանցել սահմանված ծավալը մինչև 30 տոկոսով:

18. Սեղմագիրը պետք է հրապարակվի Կոմիտեի թվային տիրույթում և բուհի կայքում՝ ազատ հասանելիությամբ, Կոմիտեի թվային տիրույթում սեղմագրի հասանելիությունը անժամկետ է:

19. Ատենախոսությունը և սեղմագիրը որպես կանոն ներկայացվում են հայերեն, մասնագիտական խորհրդի համաձայնությամբ դրանք կարելի է ներկայացնել այլ լեզվով (անգլերեն կամ ռուսերեն):

20. Սեղմագրի վերջում տրվում է անգլերեն լեզվով ամփոփագիր (հայերեն ամփոփագիրը պարտադիր է, եթե սեղմագիրն այլ լեզվով է): Սեղմագիրը կարող է ունենալ նաև այլ լեզվով տարբերակ:

3. ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

21. Դոկտորանտի գիտական ղեկավար կարող է հանդիսանալ տվյալ բնագավառում ակտիվ գիտական գործունեություն ծավալող ցանկացած հետազոտող, ով բավարարում է

հետևյալ բոլոր պահանջներին և սահմանափակումներին՝

1) ունի հետազոտական աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ, որը հավաստվում է վերջին 5 տարիների ընթացքում հրապարակված գիտական աշխատանքներով,

2) ունի գիտության տվյալ կամ հարակից մասնագիտություններում առնվազն 10 հրապարակում, այդ թվում՝ առնվազն 5-ը տվյալ մասնագիտությամբ,

3) վերջին 5 տարում ունի առնվազն 5 (հայագիտական կամ հումանիտար գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 2) գիտական հոդված, որոնք հրապարակվել են Վեբ օֆ Սայնս (Web of Science™) հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ինդեքսավորված պարբերականներում՝ որպես հոդված (article), ակնարկ (review), նամակ (letter), ինչպես նաև նույն հարթակներում ինդեքսավորված գիրք կամ գրքի գլուխ (book chapter) (այսուհետ՝ ՄԳՇ հրապարակում):

4) հանդիսանում է բուհի ակադեմիական կազմի հիմնական աշխատող կամ համատեղ ծրագրի դեպքում համապատասխան պայմանագրերի կամ իրավական շրջանակի համապատասխան՝ այլ բուհի կամ գիտական կազմակերպության ակադեմիական կազմի հիմնական աշխատող կամ արտերկրի բուհի կամ գիտական կազմակերպության հետազոտող՝ ում հետ բուհն ունի տվյալ դոկտորական հետազոտությունը ղեկավարելու պայմանագիր:

22. Ակադեմիական խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, բուհի կանոնադրությամբ և Կոմիտեի կողմից հաստատած Գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանված կարգով կարող է հաստատել նաև ատենախոսության համաղեկավարը արտերկրից:

23. Գիտական ղեկավարները պետք է գրանցված լինեն Կոմիտեի թվային տիրույթում՝ ներկայացնելով անհրաժեշտ տվյալները:

24. Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ հանդիսանալ 5-ից ոչ ավել դոկտորանտի ղեկավար:

4. ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

25. Բարձրագույն կրթության տվյալ մասնագիտությանը համապատասխան դոկտորական ատենախոսության թեմա հաստատելու իրավունք ունեն

հավատարմագրված կամ նախահավատարմագրված այն բուհերը, որոնք ունեն տվյալ մասնագիտությամբ դոկտորական կրթություն իրականացնելու լիցենզիա, և այդ դրան համապատասխան բնագավառում գիտական աստիճան ունեցող առնվազն 3 հիմնական աշխատակից, և վերջին 5 տարում ունեն տվյալ մասնագիտության բնագավառին համապատասխան առնվազն 10 ՄԳՇ հրապարակում (հայագիտական կամ հումանիտար գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 5 ՄԳՇ հրապարակում), որոնցում բուհը նշված է որպես հեղինակի աշխատանքի վայր:

26. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ որոշման մեջ նշվում են թեմայի անվանումը, գիտական ղեկավարը (ղեկավարները), գիտական աստիճանի շնորհման բնագավառը և մասնագիտությունն՝ ըստ ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկի:

27. Ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ որոշման մասին քաղվածքը բուհը ներկայացնում է Կոմիտեին՝ հաստատվելուց հետո, ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում:

28. Դոկտորական ատենախոսության պաշտպանության համար ուսումնառության ժամանակահատվածի ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) Հայցողը պետք է ունենա՝

1) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, բժշկական, գյուղատնտեսական, հասարակական գիտություններին համապատասխանող մասնագիտություններով՝ առնվազն 2 ՄԳՇ հրապարակում, որոնցում հայցորդը պետք է հանդես գա որպես առաջին հեղինակ (Հայցողի անունը և ազգանունը տվյալ դեպքում հեղինակների շարքում առաջինն է նշված), այն նոր և արագ զարգացող մասնագիտություններում կամ գիտակարգերում, որտեղ որպես գիտական հրապարակում ավելի ընդունելի են գիտական հրապարակումները գիտաժողովի զեկույցի տեսքով (proceedings) բուհի գիտական խորհուրդը կարող է կայացնել դրանք որպես ՄԳՇ հրապարակում ընդունելու գիտաչափական տվյալներով հիմնավորված որոշում, որը քննարկվում է նաև մասնագիտական խորհրդում:

2) հայագիտություն և հումանիտար գիտություններին համապատասխան մասնագիտություններով՝ առնվազն 3 հրապարակում ՀՀ կամ օտարերկրյա պետությունների գրախոսվող գիտական պարբերականներում, որոնցից առնվազն 1 -ը՝

ՄԳՇ հրապարակում, որում հայցորդը պետք է հանդես գա որպես առաջին հեղինակ:

5. ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

29. Գիտական աստիճանի շնորհման գործընթացը սկսվում է դոկտորանտի կողմից ուսումնառության մասում նախատեսված բոլոր քննությունների հաջող հանձնելու և հետազոտական մասի հիմնական մասն իրականացված լինելու պարագայում:

30. Նախքան ատենախոսությունը հանրային պաշտպանության ներկայացնելը, բուհի՝ ատենախոսության թեման հաստատած ակադեմիական խորհուրդը կազմակերպում է ատենախոսության նախնական փորձաքննություն (նախապաշտպանություն), որի ժամանակ դոկտորանտը ներկայացնում է հետազոտական մասում իր աշխատանքների ընթացքը և արդյունքները, որի արդյունքում ակադեմիական խորհուրդը հավաստում է դոկտորանտի պատրաստվածության համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակի 8-րդ մակարդակի նկարագրերին, ինչպես նաև հաստատում է հետազոտության արդյունքների հավաստիությունը, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, հրատարակած աշխատություններում դոկտորանտի ներդրումը, դրանցում հետազոտության արդյունքների ընդգրկման լիարժեքությունը և ատենախոսության համապատասխանությունը մասնագիտությանը: Ակադեմիական խորհրդի կարծիքը ներկայացվում է եզրակացության տեսքով, որը կցվում է դոկտորանտի անձնական գործին՝ և վերբեռնվում է Կոմիտեի թվային տիրույթում:

31. Եզրակացությունն, որն ուժի մեջ է մեկ տարի, պետք է տրվի ատենախոսությունը նախնական փորձաքննության հանձնելուց հետո՝ ամենաուշը 2 ամսվա ընթացքում (քննարկումների և փոփոխությունների անհրաժեշտության դեպքում՝ նշված ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը 1 ամսով):

32. Եզրակացությունից հետո, 10 օրվա ընթացքում, սույն կարգի և Կանոնակարգի համաձայն՝ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (ներառյալ առանց հղման այլ հեղինակներից և աղբյուրներից փոխառված առանձին դրույթների կամ նյութերի բացակայության վերաբերյալ Հայցողի գրավոր հավաստումը) բուհը միասնական թվային համակարգի միջոցով ներկայացնում է Կոմիտե՝ ատենախոսության պաշտպանության օր նշանակելու և համապատասխան մասնագիտական խորհուրդ ձևավորելու համար:

33. Դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունները անցկացվում են

տվյալ տարվա հունվար-մարտ, մայիս-հուլիս և սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում:

34. Մասնագիտական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Կոմիտեի կողմից ձևավորված խորհուրդ է, որը ստեղծվում և գործում է համաձայն սույն կարգի և Կանոնակարգի:

35. Խորհուրդները ձևավորվում են Կոմիտեի կողմից վարվող աստիճանաշնորհման փորձագիտական բազայից, որը կազմվում է համաձայն գիտության և տեխնոլոգիաների ոլորտում գործունեության բնագավառների և մասնագիտությունների: Յուրաքանչյուր ատենախոսության պաշտպանության համար նշված բազայից ձևավորվում է Խորհուրդ՝ ըստ փորձագետների գիտական և տեխնոլոգիական գործունեության շրջանակի և պաշտպանության ներկայացված հետազոտական թեմայի համապատասխանության: Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի հետ կապված հարաբերությունները կարգավորող «Պետական գաղտնիքի մասին» օրենքի կարգավորումների հիմքով պետական գաղտնիք պարունակող դոկտորական ատենախոսությունների պաշտպանությանը, ընդդիմախոսությանը և փորձաքննությանը կարող են մասնակցել միայն այն անձինք, ովքեր ունեն սահմանված կարգով գաղտնի տեղեկություններին առնչվելու համապատասխան թույլտվություն: Կոմիտեի ղեկավարը, բուհի (որտեղ պատրաստվել է ատենախոսությունը) ղեկավարի ատենախոսության գաղտնիության մասին տրամադրած եզրակացությունը, սահմանված կարգով, ուղարկում է մասնագիտական խորհուրդ:

36. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել Կոմիտեի էլեկտրոնային համակարգում գրանցված տվյալ կամ հարակից գիտական բնագավառների փորձագետներ, ովքեր հանդիսանում են գիտության տվյալ կամ հարակից բնագավառում ակտիվ գործունեություն ծավալող գիտնականներ և ունեն առնվազն 10 հրապարակում, այդ թվում՝ առնվազն 5-ը տվյալ մասնագիտությամբ, և վերջին 5 տարում՝

1) ունեն առնվազն 5 ՄԳՇ հրապարակումներ (հայագիտական կամ հումանիտար գիտությունների մասնագիտությունների դեպքում՝ առնվազն 2 ՄԳՇ հրապարակում), որոնք չեն ընդգրկվել ատենախոսության պաշտպանության ներկայացված հրապարակումների ցանկում, կամ,

2) վերջին 10 տարում եղել են առնվազն 3 պաշտպանած ատենախոսության գիտական ղեկավար:

37. Դոկտորական ատենախոսության պաշտպանությունը, որը հրապարակային է և բաց, Կոմիտեի նախագահի հրամանով և կազմակերպության համաձայնությամբ կարող է անցկացվել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կամ մեկ այլ կազմակերպությունում՝ տվյալ կազմակերպությունում պաշտպանությունը կազմակերպելու նպատակահարմարության հիմնավորմամբ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների երաշխավորմամբ (հագեցած առցանց հեռարձակման համար անհրաժեշտ տեսաձայնային սարքավորումներով): Ատենախոսության պաշտպանությունն (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիք պարունակող դոկտորական ատենախոսությունների), հեռարձակվում է առցանց, ձայնագրությունը պահպանվում է և ձայնագրության հղումը տեղադրվում է Կոմիտեի կայքի համապատասխան բաժնում: Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիք պարունակող դոկտորական ատենախոսությունների պաշտպանության վերաբերյալ հրապարակային հայտարարություն չի լինում, իսկ ատենախոսության նյութերը պահպանվում են Կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

38. Ատենախոսության պաշտպանության ծախսերը հատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից այդ նպատակով Կոմիտեին հատկացված միջոցների հաշվին:

39. Բուհի կողմից տվյալ Հայցողի փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո Կոմիտեի նախագահի հրամանով 10 օրվա ընթացքում ձևավորվում է Խորհրդի անհատական կազմ, ինչպես նաև նշանակվում է ատենախոսության պաշտպանության օր (նկատի ունենալով սույն կարգի 33-րդ մասով նախատեսված ժամկետները), որը պետք է լինի բուհի կողմից փաստաթղթերի փաթեթը Կոմիտե ներկայացնելուց հետո ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 90 օրվա ընթացքում: Տվյալ ժամանակահատվածում գիտության նույն բնագավառին համապատասխան մեկից ավել դոկտորանտների առկայության պարագայում հանրային պաշտպանությունները կազմակերպվում են նույն օրվա կամ օրերի ընթացքում:

40. Խորհրդի կազմը բաղկացած է 9 անդամից, ներառյալ՝ Խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղարը, որոնց նշանակում է Կոմիտեի նախագահը:

41. Տվյալ մասնագիտության բնագավառին համապատասխան ատենախոսությունների պաշտպանության համար ձևավորված Խորհուրդներում որպես Խորհրդի քարտուղար կարող է լինել նույն անձը, որի լիազորությունները և

պարտականությունները սահմանվում են Կանոնակարգով:

42. Սույն կարգի 39-րդ մասի և Կանոնակարգի համաձայն՝ Խորհուրդ ձևավորելու և ատենախոսության պաշտպանության օրը նշանակելուց հետո, ատենախոսությունը և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է Խորհրդի անդամներին՝ նախնական քննարկման:

43. Խորհրդի կողմից նախնական քննարկումը կազմակերպվում է Հայցողի փաստաթղթերի փաթեթն ստանալու օրվանից հետո 15 օրվա ընթացքում:

44. Ատենախոսությունը պաշտպանության ընդունելու դեպքում Խորհուրդը նշանակում է ատենախոսության պաշտոնական ընդդիմախոսներ (սույն կարգի 36-րդ կետով Խորհրդի անդամին ներկայացվող նույն պահանջներին բավարարող)՝ գիտության տվյալ կամ հարակից բնագավառի 2 գիտնականներից:

45. Ընդդիմախոս կարող է նշանակվել արտերկրից, եթե ատենախոսությունը ներկայացված է այն լեզվով, որին տիրապետում է ընդդիմախոսը:

46. Ատենախոսությունը պաշտպանության ընդունած Խորհրդի անդամներից՝ որպես տվյալ ատենախոսության ընդդիմախոս կարող է լինել ընդդիմախոսներից միայն մեկը:

47. Պաշտոնական ընդդիմախոսներ չեն կարող լինել Կոմիտեի աշխատողները, ատենախոսությունը պաշտպանության ընդունած Խորհրդի նախագահը և քարտուղարը, ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների համահեղինակները, Հայցողի գիտական ղեկավարը և ատենախոսության վերաբերյալ եզրակացություն տրամադրած բուհի համապատասխան ակադեմիական միավորի ղեկավարը:

48. Պաշտոնական ընդդիմախոսը, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները՝ 15 օրվա ընթացքում Խորհրդին ներկայացնում է կարծիք, որտեղ գնահատում է ատենախոսության թեմայի արդիականությունը, դրույթների և եզրահանգումների հիմնավորվածությունը, գիտական նորույթը և հիմնավորման աստիճանը, ատենախոսության համապատասխանությունը սույն կարգի 8-րդ, 9-րդ, 11-13-րդ և 28-րդ մասերի նկարագրերին և պահանջներին:

49. Եթե ընդդիմախոսը սահմանված ժամկետում չի ներկայացնում կարծիք կամ ներկայացրած կարծիքը չի համապատասխանում սույն կարգի 48-րդ պահանջներին, ապա ատենախոսության պաշտպանության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ, Խորհուրդն իրավասու է փոխել ընդդիմախոսին՝ պատճառաբանված գրավոր հիմնավորմամբ:

50. Ընդդիմախոսների բացասական կարծիքների դեպքում՝ ատենախոսությունը

Խորհրդում պաշտպանության չի դրվում, իսկ Խորհրդի համապատասխան որոշումը և անհրաժեշտ փաստաթղթերը հինգ օրվա ընթացքում ներկայացվում է Կոմիտե:

51. Խորհուրդը՝ ատենախոսության պաշտպանությունից առնվազն 15 օր առաջ, պաշտոնական ընդդիմախոսների կարծիքների պատճենները հանձնում է Հայցողին և ուղարկում է Կոմիտե՝ դրանց հրապարակային հասանելիությունն ապահովելու համար:

52. Ատենախոսության հանրային պաշտպանությունը կայանում է ընդդիմախոսների ներկայության պարագայում, այդ թվում նաև հեռավար:

53. Ատենախոսության պաշտպանությունը կարող է կայանալ նաև ընդդիմախոսներից մեկի բացակայության դեպքում, որի դրական կամ բացասական կարծիքը հրապարակվում է Խորհրդի նիստում:

54. Երկու ընդդիմախոսների բացակայության դեպքում՝ Խորհրդի որոշմամբ նիստը կարող է հետաձգվել առավելագույնը մեկ ամսով, որից հետո՝ ընդդիմախոսների ներկայության անհնարինության դեպքում Խորհուրդն իրավասու է պաշտպանության նիստն անցկացնել նաև առանց տվյալ ընդդիմախոսների:

55. Խորհրդի նիստի քվորումն ապահովելու համար անհրաժեշտ է Խորհրդի անդամներից առնվազն 6-ի մասնակցությունը, ընդ որում՝ առանձնահատուկ դեպքերում Խորհրդի անդամները (մասնավորապես՝ Խորհրդի արտերկրում գտնվող անդամը) նիստին կարող են մասնակցել առցանց, բացառությամբ՝ Խորհրդի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի:

56. Ատենախոսության պաշտպանությունը և Խորհրդի նիստերը անցկացվում են հայերեն, կամ օտար լեզվով՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով երկկողմանի թարգմանությունը:

57. Ատենախոսության պաշտպանությունը հեռարձակվում է առցանց, որի հղումը պաշտպանությունից 10 օր առաջ տեղադրվում է Կոմիտեի և ատենախոսության պաշտպանությունն անցկացնող կազմակերպության կայքերում, ընդ որում՝ պաշտպանության ընթացքի վերաբերյալ ձայնագրությունը պետք է տեղադրվի նաև բաց հասանելիությամբ՝ պաշտպանությունից հետո 15 օրվա ընթացքում, և հասանելի լինի մինչև դիպլոմի ստացումը:

58. Եթե առանց սկզբնաղբյուրները նշելու այլ հեղինակներից օգտագործվել են որոշակի դրույթներ և նյութեր, Խորհուրդը բաց քվեարկությամբ, նիստին ներկա

անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ատենախոսությունը հանում է պաշտ-պանությունից և հինգ օրվա ընթացքում որոշումը՝ սեղմագրի և նիստի սղագրության հետ միասին, ուղարկում է Կոմիտե:

59. Հայցողի վերափոխված ատենախոսությունը կարող է ներկայացվել պաշտպանության Խորհրդի որոշումից առնվազն մեկ տարի հետո, ընդ որում՝ առնվազն մեկ նոր հրապարակում հրատարակելուց հետո, որը պետք է արտացոլված լինի վերափոխված ատենախոսության մեջ:

60. Եթե Խորհուրդը Հայցողի ատենախոսությունը հանել է պաշտպանությունից սույն կարգի 58-րդ մասով կամ Կոմիտեն մերժել է Խորհրդի որոշումը սույն կարգի 67-րդ մասով, ապա Հայցողի գիտական ղեկավարը հինգ տարով զրկվում է ատենախոսության ղեկավար նշանակվելու իրավունքից, իսկ ատենախոսության վերաբերյալ դրական կարծիք տված ընդդիմախոսը՝ հինգ տարով ատենախոսության ընդդիմախոս նշանակվելու իրավունքից:

61. Ատենախոսության պաշտպանությունից հետո գիտական աստիճան շնորհելու մասին որոշումը Խորհուրդն ընդունում է գաղտնի քվեարկությամբ:

62. Գիտական աստիճան շնորհելու մասին Խորհրդի որոշումը դրական է, եթե «կողմ» է քվեարկել Խորհրդի կազմի անդամներից առնվազն 5-ը:

63. Գաղտնի քվեարկությունից հետո, դրական որոշման դեպքում, Խորհուրդը բաց քվեարկությամբ ընդունում է ատենախոսության մասին եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ատենախոսության էական գիտական արդյունքները, դրանց գիտական նորույթի, հավաստիության գնահատականը, տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև գիտական աստիճան շնորհելու մասին Խորհրդի որոշումը:

64. Դրական որոշման դեպքում Խորհուրդը Կոմիտե է ուղարկում որակավորման գործը, որն ընդգրկում է ատենախոսությունը, սեղմագիրը, տեղեկանք գրագողության բացակայության մասին և «Գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգով» սահմանված փաստաթղթերը:

65. Բացասական որոշման դեպքում Խորհուրդն այդ մասին գրավոր հայտնում է Կոմիտեին և Հայցողին է տալիս քաղվածք Խորհրդի նիստի արձանագրությունից՝ գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

66. Խորհրդի բացասական որոշման դեպքում Հայցողը ատենախոսությունը կարող է ներկայացնել պաշտպանության որոշման ընդունումից առնվազն 6 ամիս հետո:

6. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿՈՄԻՏԵՈՒՄ

67. Կոմիտեն ուսումնասիրում է որակավորման գործը և սույն կարգի 10-րդ և 28-րդ մասերի պահանջներին անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում՝ Կոմիտեն մերժում է գիտական աստիճան շնորհելու մասին Խորհրդի միջնորդությունը և մերժման մասին Կոմիտեի նախագահի հրամանն ուղարկվում է Խորհուրդ:

68. Հայցողը, որի գիտական աստիճան շնորհելու մասին Խորհրդի որոշումը մերժվել է սույն կարգի 10-րդ մասի խախտման հիմքով, վերափոխված ատենախոսությունը կարող է ներկայացնել պաշտպանության գիտական աստիճանի շնորհումը մերժելու մասին Կոմիտեի նախագահի հրամանի ընդունումից առնվազն մեկ տարի հետո, ընդ որում՝ առնվազն մեկ նոր ՄԳՇ հրապարակում հրատարակելուց հետո, որը պետք է արտացոլված լինի վերափոխված ատենախոսության մեջ:

69. Սույն կարգի 28-րդ մասի հիմքով գիտական աստիճան շնորհելու մասին Խորհրդի որոշումը մերժելու դեպքում՝ պաշտպանություն կարող է կազմակերպվել գիտական աստիճանի շնորհումը մերժելու մասին Կոմիտեի նախագահի հրամանի ընդունումից հետո 6 ամսվա ընթացքում՝ անհամապատասխանությունները վերացնելուց հետո:

70. Սույն կարգի 67-րդ մասով սահմանված խախտումներ չհայտնաբերելու դեպքում սույն կարգի 9-րդ և 11-րդ, ինչպես նաև 10-րդ մասերի պահանջներին համապատասխանությունը ստուգելու և եզրակացություն ստանալու նպատակով՝ Կոմիտեն ատենախոսությունը տալիս է փորձագետի (սույն կարգի 36-րդ մասով Խորհրդի անդամին ներկայացվող նույն պահանջներին բավարարող), եթե՝

1) Հայցողի որակավորման գործում առկա է բացասական կարծիք,

2) Հայցողին դոկտորի գիտական աստիճանի որակավորում շնորհվել է Խորհրդի անդամների 5-7 «կողմ» ձայներով:

71. Փորձագետ չեն կարող լինել Կոմիտեի աշխատողները, ատենախոսությունը պաշտպանության ընդունած Խորհրդի անդամները, ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների համահեղինակները, Հայցողի գիտական ղեկավարը, ատենախոսության պաշտոնական ընդդիմախոսները և ատենախոսության վերաբերյալ եզրակացություն տրամադրած բուհի համապատասխան ակադեմիական միավորի ղեկավարը, ինչպս նաև այլ շահերի բախում ունեցող անձինք, ովքեր դրա առկայության կամ բացակայության մասին պետք է հայտնեն համաձայնության տեքստում: Կոմիտեն

փորձագետի հետ կնքում է պայմանագիր, որտեղ ամրագրվում են փորձագետի աշխատանքի կատարման պայմանները և ժամկետը: Կոմիտեն փորձագետի մասին տեղեկություն կարող է հրապարակել միայն նրա գրավոր համաձայնության դեպքում:

72. Փորձագետը, ստուգելով ատենախոսության համապատասխանությունը սույն կարգի 9-րդ և 11-րդ, ինչպես նաև 10-րդ մասի պահանջներին, տալիս է դրական կամ բացասական եզրակացություն՝ պատճառաբանված հիմնավորմամբ:

73. Սույն կարգի պահանջներին որակավորման գործի համապատասխանության և փորձագետի դրական եզրակացության դեպքում՝ որակավորման գործը Կոմիտե մուտքագրվելու օրվանից 3 ամսվա ընթացքում, Կոմիտեն հաստատում է Խորհրդի որոշումը և հանձնում է գիտական աստիճանի դիպլոմ՝ հիմք ընդունելով նաև առանց հղման այլ հեղինակներից և աղբյուրներից փոխառված առանձին դրույթների կամ նյութերի բացակայության վերաբերյալ Խորհրդի ներկայացրած տեղեկանքը:

74. Փորձագետի բացասական եզրակացության դեպքում՝ որակավորման գործը Կոմիտե մուտքագրվելու օրվանից 3 ամսվա ընթացքում, Կոմիտեն եզրակացությունն ուղարկում է Խորհուրդ՝ Հայցողի մասնակցությամբ քննարկում կազմակերպելու համար:

75. Հայցողը, հաշվի առնելով փորձագետի բացասական եզրակացությունը, կարող է ատենախոսությունը (փոփոխություններով կամ պատճառաբանված հիմնավորմամբ՝ առանց փոփոխությունների) Խորհուրդ (Կոմիտեի կողմից այն ձևավորվում է նույն կազմով, դրա անհնարինության դեպքում՝ ձևավորվում է նոր Խորհուրդ՝ նախկին Խորհրդի կազմի առնվազն 5 անդամի ընդգրկմամբ) ներկայացնել Կոմիտեի եզրակացությունը ստանալուց հետո 2-6 ամսվա ընթացքում:

76. Սույն կարգի 75-րդ մասով նախատեսված ժամկետում Խորհուրդը քննարկում է ներկայացված ատենախոսությունը և կայացնում Հայցողին գիտական աստիճան շնորհելու մասին դրական կամ բացասական որոշում:

77. Սույն կարգի 76-րդ մասում նշված որոշումը Խորհուրդը հնգօրյա ժամկետում ուղարկում է Կոմիտե, որը Խորհրդի դրական որոշման դեպքում կայացնում է գիտական աստիճանի դիպլոմ տալու մասին որոշում:

78. Խորհրդի բացասական որոշման դեպքում Հայցողը վերափոխված ատենախոսությունը կարող է ներկայացնել պաշտպանության որոշման ընդունումից առնվազն մեկ տարի հետո, ընդ որում՝ առնվազն մեկ նոր հրապարակում հրատարակելուց հետո, որը պետք է արտացոլված լինի վերափոխված ատենախոսության մեջ:

79. Խորհրդի և Կոմիտեի կայացրած որոշումները կարող են բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

7. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

80. Օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի դիպլոմը (վկայագիրը) Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի դիպլոմին համապատասխանեցնում է բարձրագույն կրթության և գիտության օրենքով սահմանված ակադեմիական փոխճանաչման լիազորություններ ունեցող համապատասխան մասնագիտացված կառույցը, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

81. Օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի դիպլոմի (վկայագրի) համապատասխանեցումը, ներառյալ՝ համարժեքության ճանաչումը և հաստատումը, կատարվում է անձի դիմումի հիման վրա, որին կից պետք է ներկայացվեն Մասնագիտացված կառույցի կողմից սահմանված փաստաթղթերը և հրատարակված գիտական աշխատանքների պատճենները (առկայության դեպքում): Ստացված փաստաթղթերի և գործող միջազգային ընթացակարգերի հիման վրա Մասնագիտացված կառույցը կայացնում է՝

1) դրական որոշում, եթե անձի ներկայացրած փաստաթղթերը ներառյալ նախորդ կրթությունը բավարարում են սույն կարգի պահանջներին, կամ գիտական աստիճան շնորհած կազմակերպությունը ճանաչված է տվյալ պետության կողմից, որը ՀՀ հետ գտնվում է միջազգային ճանաչման ՀՀ վավերացված միջազգային շրջանակների մեջ:

2) բացասական որոշում, եթե անձին գիտական աստիճան շնորհած կազմակերպությունը չի ճանաչվում տվյալ պետության կողմից կամ ՀՀ և տվյալ պետության միջև առկա չեն ճանաչման ընթացակարգեր, ինչպես նաև նախորդող կրթությունը և պաշտպանության ընթացակարգը չեն կհամապատասխանում սույն կարգի պահանջներին:

8. ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԶՐԿԵԼԸ

82. Գիտական աստիճան ունեցող ցանկացած անձ կարող է զրկվել գիտական աստիճանից եթե նրա ատենախոսության կամ պաշտպանության հիմք հանդիսացած

գիտական հոդվածներում հայտնաբերվել է գրագողության դեպք:

83. Գրագողության հանգամանքը հաստատվում կամ հերքվում է Կոմիտեի նախագահի հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի կողմից, որի՝ գրագողության առկայության հանգամանքը հաստատող եզրակացության հիման վրա կայացվում է գիտական աստիճանից զրկելու որոշումը:

84. Գիտական աստիճանից զրկումը իրականացվում է գիտական աստիճան շնորհելու մասին կայացված որոշումը տվյալ անձի մասով ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

85. Գրագողության հայտնաբերման դեպքում համապատասխան գրություններ են ուղարկվում դոկտորանտի բուհ, որտեղ կազմակերպվում է ներքին քննություն՝ պատճառների հայտնաբերման և վերացման կամ ներքին ընթացակարգերի հստակեցման նպատակով: